



# Հաճախ Տրվող Հարցեր. COVID-19 Վարակի Կրկնություն Paxlovid Դեղամիջոցի Ընդունումից Հետո



## Ի՞նչ է COVID-19-ի Կրկնությունը

COVID-19-ի կրկնությունը այն է, երբ COVID-19-ով վարակված մարդիկ լավանում են (ախտանիշները բարելավվում են, և/կամ թեստը ունենում է բացասական արդյունք), այնուհետև՝ ապաքինվելուց 2-8 օր անց, նրանց մոտ նորից սկսում են ի հայտ գալ ախտանիշներ և/կամ նրանց թեստի արդյունքը կրկին դրական է լինում: Եղել են հաղորդումներ այդպիսի դեպքերի մասին այն հիվանդների շրջանում, որոնք բուժվել են Paxlovid դեղամիջոցով (հակավիրուսային դեղահաբ, որն օգնում է բարձր վտանգավորության խմբում գտնվող հիվանդներին, որոնք վարակվել են COVID-19-ով, այնքան ծանր չհիվանդանալ, որ կարիք ունենան հիվանդանոց տեղափոխվելու):

## Ինչո՞ւ է հիվանդների մոտ կրկնվում վարակը

Այս պահին պարզ չէ, թե ինչու դա կարող է տեղի ունենալ: Մենդի և Դեղորայքի Վարչությունը (FDA), Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնները (CDC) և Pfizer-ը ստուգում են տվյալները և հավաքում են դեպքերի վերաբերյալ հավելյալ արձանագրություններ՝ ավելի լավ հասկանալու համար, թե ինչ կարող է տեղի ունենալ այդ հիվանդների մոտ: Paxlovid-ի նախնական կլինիկական փորձարկումներում ինչպես Paxlovid ընդունած հիվանդների, այնպես էլ պլացեբո (չաքարի հաբ) ընդունած հիվանդների մոտ նկատվել է վարակի կրկնություն: Սա նշանակում է, որ COVID-19-ի կրկնությունը կարող է կապված չլինել դեղամիջոցի հետ:

## Որքա՞ն է տևում վարակի կրկնությունը

Նկարագրված դեպքերում մարդկանց մեծամասնության մոտ կրկնված վարակի ախտանիշները բարելավվել են, և/կամ դրական արդյունքով թեստերը ցուցադրել են բացասական արդյունք 3 օրվա ընթացքում:

## Արդյո՞ք այն մարդիկ, որոնց մոտ կրկնվում է վարակը, կարող են այնքան ծանր հիվանդանալ, որ հոսպիտալացվեն

Հիվանդները, որոնց մոտ կրկնվել է վարակը, ըստ երևույթին, ունեցել են մեղմ ախտանիշներ, և ծանր հիվանդության մասին հաղորդումներ չեն եղել: Սակայն ախտանիշների վատթարանալու կամ չլավանալու դեպքում, կարևոր է, որ դիմեք ձեր բժշկին:

## Արդյո՞ք Paxlovid-ը շարունակում է առաջարկվել COVID-19-ով հիվանդների բուժման համար

Այո: Paxlovid-ով բուժումը շարունակում է առաջարկվել նրանց, որոնք գտնվում են ծանր հիվանդանալու բարձր վտանգավորության խմբում և ունեն COVID-19-ի մեղմ և միջին ախտանիշներ: Paxlovid-ով բուժումն օգնում է կանխել COVID-19-ի հետևանքով հոսպիտալացման և մահվան դեպքերը և մնում է կարևոր գործիք՝ մարդկանց հիվանդանոցում հայտնվելը կանխելու համար, եթե նրանք վարակվեն: Այցելեք [ph.lacounty.gov/covidmedicines](https://ph.lacounty.gov/covidmedicines)՝ կայքէջ COVID-19-ի բուժման դեղամիջոցների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:





## **Ինչպե՞ս կարող եմ իմանալ՝ արդյոք ինձ մոտ կրկնվում է COVID-19 վարակը**

Հնարավոր է, որ ձեզ մոտ COVID-19 վարակը կրկնվում է, եթե դուք նախկինում վարակվել եք COVID-19-ով և ապաքինվել եք (օրինակ՝ ձեր մեկուսացման շրջանն ավարտվել է), սակայն ապաքինվելուց հետո մի քանի օրվա ընթացքում (առաջին ախտորոշումից հետո 2 շաբաթվա ընթացքում) ձեզ մոտ նորից հայտնվում են ախտանիշներ կամ ձեր թեստի արդյունքը կրկին դրական է լինում:

## **Ի՞նչ պետք է անեմ, եթե կարծում եմ, որ ինձ մոտ կրկնվում է COVID-19 վարակը**

Եթե կարծում եք, որ ձեզ մոտ կրկնվում է COVID-19 վարակը, կրկին մեկուսացեք ուրիշներից: Մեկուսացումը COVID-19-ի կրկնվելու դեպքում կարող է ավարտվել ախտանիշների առաջանալուց 5 օր անց, եթե դուք առնվազն 24 ժամ ջերմություն չունեք և ձեր ախտանիշները բարելավվում են: Ուրիշներին պաշտպանելու համար կրեք [բարձր պաշտպանության դիմակ](#) այլ մարդկանց շրջապատում գտնվելիս՝ ախտանիշների հայտնվելուց հետո առնվազն 10 օր:

## **Արդյո՞ք ես պետք է կրկնեմ իմ բուժումը, եթե ինձ մոտ կրկնվում է COVID-19 վարակը**

Ոչ: Տվյալ պահին չկա որևէ ապացույց, որ ձեզ անհրաժեշտ է լինելու կրկին բուժվել կամ երկարացնել բուժումը:

## **Արդյո՞ք պատվաստված լինելը կպաշտպանի ինձ վարակի կրկնվելուց**

Ելնելով ներկա տվյալներից՝ պարզ է դառնում, որ որոշ անձանց մոտ կարող են կարճ ժամանակով կրկին դրսևորվել ախտանիշներ՝ անկախ նրանից՝ նրանք պատվաստված են եղել և արդյոք նրանք ստացել են բուժում Paxlovid-ով: Մենք շարունակում ենք պարզել ավելին այն մասին, թե ինչն է հանգեցնում COVID-19 վարակի կրկնվելուն:

Ապացույցները շարունակում են ցույց տալ, որ COVID-19-ի դեմ պատվաստումները և խթանիչները օգնում են պաշտպանել ձեզ COVID-19-ով վարակվելուց կամ ծանր հիվանդանալուց:

## **Արդյո՞ք ես կարող եմ տարածել COVID-19-ը, եթե ինձ մոտ կրկնվում է COVID-19 վարակը**

Այո, հնարավոր է, որ դուք տարածեք COVID-19, եթե ձեզ մոտ կրկնվում է COVID-19 վարակը: Դա պայմանավորված է նրանով, որ ձեր վարակը վերադարձել է: Կարևոր է, որ դուք նորից մեկուսանաք ուրիշներից, եթե ձեզ մոտ կրկնվում է COVID-19 վարակը:



## Հաճախ Տրվող Հարցեր. COVID-19 Վարակի Կրկնություն Paxlovid Դեղամիջոցի Ընդունումից Հետո



**Արդյո՞ք այն փաստը, որ մենք ականատես ենք վարակի կրկնության դեպքերի, նշանակում է, որ մարդկանց մարմինները դիմադրություն են զարգացնում Paxlovid-ի նկատմամբ**

Առայժմ չկա որևէ ապացույց, որ կրկնվող վարակը արդյունք է նրա, որ վիրուսը դարձել է դիմացկուն Paxlovid-ի նկատմամբ:

**Արդյո՞ք կան լրացուցիչ գործողություններ, որոնք ես պետք է կատարեմ, եթե ինձ մոտ կրկնվի վարակը**

Եթե ունեք հարցեր կամ մտահոգություններ ձեր ախտանիշների հետ կապված, խնդրում ենք զանգահարել ձեր բժշկին կամ Հանրային Առողջության Վարչության Չանգերի Կենտրոն՝ (833) 540-0473 հեռախոսահամարով: Աշխատակիցները հասանելի են շաբաթը 7 օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը՝ հարցերին պատասխանելու համար:

Եթե դուք բուժվել եք Paxlovid-ով և ձեզ մոտ կրկնել է COVID-19 վարակը, ապա խորհուրդ է տրվում, որ դուք ձեր մասին տեղեկություններ տրամադրեք Pfizer-ին՝ Paxlovid արտադրող ընկերությանը: Դուք կարող եք ձեր մասին տեղեկությունները ներկայացնել առցանց՝ օգտագործելով [Pfizer-ի Անվտանգության Դեպքերի Մասին Հայտնելու](#) գործիքը կամ FDA-ի [MedWatch](#)-ը: Pfizer-ը և FDA-ն կստուգեն այդ տեղեկությունները, որպեսզի օգնեն մեզ ավելի լավ հասկանալ COVID-19-ի կրկնման պատճառը:

